ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/242

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.11.2020թ. թիվ 26/26-1/16720-2020 գրությամբ Jameekar Sepahan Consulting Engineers ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 30.10.2020թ. թիվ Ե/01/2028-20 գրության հիման վրա 06.11.2020թ. թիվ 26/26-1/16720-2020 գրությամբ նախաձեռնել է Jameekar Sepahan Consulting Engineers ընկերությանը (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Jameekar Sepahan Consulting Engineers ընկերության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել, ինչպես նաև պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/242 ընթացակարգի շրջանակներում 20.11.2020թ. ժամը 10:25-ին և 30.11.2020թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.10.2020թ. թիվ Ե/01/2028-20 գրությամբ հայտնել է, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից 2020 թվականի հոկտեմբերի 08-ին հրապարակվել է ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/67 ծածկագրով ընթացակարգի հրավերը, որի հայտերի բացումը տեղի է ունեցել 2020 թվականի հոկտեմբերի 23-ին: Հայտերի բացման նիստի արդյունքում Ընկերության կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ և հրավերով սահմանված կարգով 2020 թվականի հոկտեմբերի 23-ին վերջինիս ուղարկվել է հայտը շտկելու և որակավորման փաստաթղթեր ներկայացնելու ծանուցում:

Համաձայն ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/67 ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.10 կետի՝ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը, ուստի մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն խնդրել է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ գործին սահմանված կարգով ընթացք տալ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/242 ընթացակարգի շրջանակներում 20.11.2020թ. ժամը 10:25-ին և 30.11.2020թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/242 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/242 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հայտարարվել է ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/67 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Jameekar Sepahan Consulting Engineers ընկերությունը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.10.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Jameekar Sepahan Consulting Engineers-ի կողմից ներկայացված Հավելված 1-ում նշված չէ չափաբաժնի համարը, որին ցանկություն ունի մասնակցելու վերջինս և որ պետության ռեզիդենտ է հանդիսանում, ընկերության կազմակերպա-իրավական ձևը:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է, հիմք ընդունելով Կարգի 31-րդ կետի 11-րդ կետը, նիստը կասեցնել և ծանուցել Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության կողմից շտկված հայտ չի ներկայացվել, իսկ Հավելված 1.1-ով ներկայացված մասնագետների որակավորումները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին և որոշում է կայացվել Ընթացակարգը հայտարարել չկայացած:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.11.2020թ. թիվ 26/26-1/16720-2020 գրությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 30.10.2020թ. թիվ Ե/01/2028-20 գրությունը, գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին,

3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հայտարարվել է ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/67 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Jameekar Sepahan Consulting Engineers ընկերությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.10.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Jameekar Sepahan Consulting Engineers-ի կողմից ներկայացված Հավելված 1-ում նշված չէ չափաբաժնի համարը, որին ցանկություն ունի մասնակցելու վերջինս և որ պետության ռեզիդենտ է հանդիսանում, ընկերության կազմակերպա-իրավական ձևը:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է, հիմք ընդունելով Կարգի 31-րդ կետի 11-րդ կետը, նիստը կասեցնել և ծանուցել

Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության կողմից շտկված հայտ չի ներկայացվել, իսկ Հավելված 1.1-ով ներկայացված մասնագետների որակավորումները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին և որոշում է կայացվել Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Այսպիսով՝ ուսումնասիրելով ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/67 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի և քարտուղարի գործողությունները՝ արձանագրում եմ հետևյալը.

Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

3. ***Պատվիրատուի ղեկավարը սահմանում է գնումների համակարգող, որը՝***

1) պատասխանատու է պատվիրատուի՝ գնումների գործընթացի կազմակերպման և համակարգման համար.

2) եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ.

3) իրականացնում է գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները.

4) ***կազմում և պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում տվյալ գնման ընթացակարգի արձանագրությունը*** և պայմանագիրը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ յուրաքանչյուր ***գնման գործընթացի համար պատասխանատու են*** պատվիրատուի ղեկավարը, ինչպես նաև ***իրենց վերապահված իրավասությունների մասով՝ գնումները համակարգողը***:

Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ Գնահատող հանձնաժողովի՝ նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և ***յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը***: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է.:

Նույն կետի 10-րդ ենթակետի համաձայն՝ ***յուրաքանչյուր անդամ գնահատում է ներկայացված հայտերը՝ ներառյալ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, դրանց գնահատման արդյունքներն արտացոլում է գնահատման թերթիկներում և իր ստորագրությամբ հաստատում դրանք:***

Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է ***գնահատող հանձնաժողով***, որը՝

4) բացում և գնահատում է հայտերը.

5) որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):

Օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները:***

Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ ***հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:***

Վերոհիշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հաշվի առնելով գնման գործընթացի կարևորությունը, ինչպես նաև ոչ միայն պատվիրատուի, այլ նաև մասնակիցների՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքներն ապահովելու անհրաժեշտությունը՝ օրենսդիրը սահմանել է գնման ընթացակարգը կազմակերպելու հստակ գործընթաց՝ նախատեսելով նաև գնման գործընթացի համար պատասխանատուներին, վերջիններիս գործառույթները և գնման գործընթացը կազմակերպելու պայմանները: Ընդ որում՝ համապատասխան կարգավորումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Միաժամանակ վերը նշված կարգավորումներով հստակ սահմանված է, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը ենթակա են գնահատման գնահատող հանձնաժողովի կողմից, որոնց արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը պարտադիր կարգով ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները և քարտուղարը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2020/242 ընթացակարգը նախաձեռնելու համար հիմք է հանդիսացել ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/67 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.10.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված

որոշումը, որտեղ բացակայում են ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/67 ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների և գնման գործընթացի կազմակերպման պատասխանատուի՝ գնումները համակարգողի (հանձնաժողովի քարտուղարի) ստորագրությունները, մինչդեռ Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետով հստակ սահմանվում է, որ Գնահատող հանձնաժողովի յուրաքանչյուր նիստի արդյունքում ***նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը***, հետևաբար գտնում եմ, որ նման ձևով կազմված և հրապարակված արձանագրությունը չի կարող լինել իրավաչափ և չի կարող առաջացնել որևէ իրավական հետևանք:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը, այսպես՝

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:***

Այսպիսով՝ վերը նշված նորմի համաձայն՝ մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ արձանագրվելու պայմաններում կիրառելի է Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը, մինչդեռ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 27.10.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ Ընկերության կողմից ներկայացված հայտում արձանագրելով հետևյալ անհամապատասխանությունները՝ Հավելված 1-ում նշված չէ չափաբաժնի

համարը, որին ցանկություն ունի մասնակցելու վերջինս և որ պետության ռեզիդենտ է հանդիսանում, ընկերության կազմակերպա-իրավական ձևը, Կարգի 41-րդ կետը կիրառելու փոխարեն կիրառել է Կարգի 31-րդ կետի 11-րդ ենթակետը, որը նախատեսված չէ Կարգով:

Նման պայմաններում գտնում եմ, որ վերը նշված խախտումներով իրականացված և կայացված որոշումները իրավաչափ չեն:

Այսպիսով՝ վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ ոչ իրավաչափ ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության, ուստիև հնարավոր չէ արձանագրել Ընկերության կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.11.2020թ. թիվ 26/26-1/16720-2020 գրությամբ Jameekar Sepahan Consulting Engineers ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**